



**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ**

Հ Ր Ա Մ Ա Ն

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 45.2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ ենթակետի և «Հայաստանի Հանրապետության փաստաբանական ակադեմիա» հիմնադրամի կանոնադրության 81-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներով,

հաշվի առնելով փաստաբանների վերապատրաստման կարգը հաստատելու անհրաժեշտությունը՝

1. Հաստատել փաստաբանների վերապատրաստման կարգը՝ համաձայն հավելվածի 1-ի:

2. Հաստատել փաստաբանների վերապատրաստման ծրագրի ձևը՝ համաձայն հավելված 2-ի:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանական ակադեմիայի ղեկավար՝

Արա Զոհրաբյան

թիվ 159-L
20 դեկտեմբերի 2022թ.
ք.Երևան

ՀԱՎԵԼՎԱԾ 1

«Հայաստանի Հանրապետության
փաստաբանական ակադեմիա» հիմնադրամի
ոեկտոր Արա Ջոհրաբյանի 20.12.2022թ. 159-Լ
հրամանի



ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ Կ Ա Ր Գ

ք. Երևան, 2022թ.

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Փաստաբանների վերապատրաստման սույն կարգով (**այսուհետ՝ Կարգ**) սահմանվում են «Հայաստանի Հանրապետության փաստաբանական ակադեմիա» հիմնադրամի (**այսուհետ՝ ՀՀ փաստաբանական ակադեմիա**) կողմից փաստաբանների համար անցկացվող վերապատրաստման դասընթացների կազմակերպման ընդհանուր չափորոշիչները, վերապատրաստման դասընթացների տևողությունը, ձևաչափը, փաստաբանների մասնակցության կարգը:

2. Վերապատրաստման նպատակը փաստաբանների գիտելիքի, հմտությունների և մասնագիտական պատրաստվածության բարձրացումն է:

3. Փաստաբանների համար վերապատրաստման դասընթացները կազմակերպվում են անվճար, բացառությամբ լրացուցիչ վերապատրաստման դասընթացների: Լրացուցիչ վերապատրաստման դասընթացները սույն կարգի իմաստով համարվում են այն դասընթացները, որոնք փաստաբանը պետք է անցնի իր հաշվին՝ արտոնագրի գործողությունը վերականգնելու կամ որպես կարգապահական պատասխանատվության ենթարկվելու կապակցությամբ՝ ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի կամ ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի որոշման հիման վրա:

4. Սույն կարգին համապատասխան վերապատրաստված փաստաբանների վերաբերյալ տեղեկությունները փոխանցվում են ՀՀ փաստաբանների պալատ՝ պարտադիր վերապատրաստումների ժամաքանակում ներառվելու նպատակով:

5. ՀՀ փաստաբանական ակադեմիայի և ՀՀ փաստաբանների պալատի միջև տեղեկատվության փոխանակումը կատարվում է ընդհանուր կառավարվող էլեկտրոնային պահոցների կամ էլեկտրոնային փոստի միջոցով՝ առանց լրացուցիչ փաստաթղթաշրջանառության հաշվառման:

6. ՀՀ փաստաբանական ակադեմիան օժանդակում է ՀՀ փաստաբանների պալատին՝ վերապատրաստման դասընթացների կազմակերպման հարցում՝ լսարաններ տրամադրելու, նյութեր և այլ տեխնիկական աջակցություն տրամադրելու, ինչպես նաև դասախոսներին մասամբ կամ ամբողջովին վարձատրելու միջոցով:

II. ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ ԵՎ ԳՐԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԸ

7. Վերապատրաստման մեկ դասընթացի տևողությունը 4 (չորս) ակադեմիական ժամ է (**1 (մեկ) ակադեմիական ժամը հավասար է 40 (քառասուն) րոպեի**):

8. Վերապատրաստման դասընթացները կազմակերպվում են առկա, հեռավար կամ անցանց եղանակներով: ՀՀ փաստաբանական ակադեմիան կարող է դասընթացն անցկացնել միաժամանակ առկա և հեռավար եղանակներով:

9. **Առկա եղանակով** փաստաբանների վերապատրաստման դասընթացն անցկացվում է որոշակի տարածքում (լսարանում, դահլիճում, սենյակում) փաստաբանների խմբով՝ փաստաբանների և դասախոսի անմիջական մասնակցությամբ:

10. **Հեռավար եղանակով** փաստաբանների վերապատրաստման դասընթացն անցկացվում է փաստաբանների և դասախոսի միջև տեղեկատվական

տեխնոլոգիաների կամ հեռահաղորդակցության միջոցներով՝ նրանց անմիջական մասնակցությամբ:

11. **Անցանց եղանակով** փաստաբանների վերապատրաստման դասընթացն անցկացվում է համացանցի միջոցով ՀՀ փաստաբանական ակադեմիայի կայքին կամ ուսումնական հարթակին միանալով՝ դասընթացը դիտելու և առաջադրանքները կատարելու միջոցով:

12. Վերապատրաստման դասընթացներին փաստաբանների հաշվառումն իրականացվում է՝

1) **առկա եղանակով**՝ էլեկտրոնային հաշվառման կամ տեղում գրանցման միջոցով.

2) **հեռավար եղանակով**՝ ՀՀ փաստաբանական ակադեմիայի աշխատակցի կամ այլ մասնագետի (**այսուհետ՝ Աշխատակից**) կողմից գրանցման միջոցով.

3) **անցանց եղանակով**՝ համապատասխան ծրագրով նախատեսված առաջադրանքները սահմանված կարգով և ծավալով կատարելու դեպքում՝ համակարգի կողմից ինքնաշխատ գրանցման ձևով:

13. Դասընթացի անցկացման ձևի մասին փաստաբանները տեղեկացվում են առնվազն դասընթացից առնվազն մեկ օր առաջ տարածված հայտարարությամբ:

14. Վերապատրաստման դասընթացին փաստաբանը կարող է մասնակցել ՀՀ փաստաբանական ակադեմիայի հետ պայմանագիր կնքելու կամ սույն կարգին համապատասխան դասընթացին մասնակցելու համար վերապատրաստման դասընթացի թեմայի հրապարակումից հետո՝ հայտարարության մեջ նշված ժամկետում էլեկտրոնային կամ այլ՝ գրանցվող անձի ինքնությունը պարզելու հնարավորություն ընձեռող եղանակով գրանցվելու դեպքում:

III. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

15. ՀՀ փաստաբանական ակադեմիայի կողմից կամ վերջինիս օժանդակությամբ ՀՀ փաստաբանների պալատի կողմից կազմակերպած դասընթացներին փաստաբանների մասնակցությունը կարող է հաշվառվել նաև լրացուցիչ վերապատրաստման ժամաքանակում՝ սույն կարգի 16-րդ կետում նշված դեպքում:

16. Փաստաբանի մասնակցությունը վերապատրաստման դասընթացին հաշվառվում է որպես լրացուցիչ վերապատրաստման ժամ, եթե փաստաբանը համապատասխան դիմում է ներկայացնում ՀՀ փաստաբանական ակադեմիային՝

1) դիմումում նշելով ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի կամ կարգապահական հանձնաժողովի որոշման ամսաթիվը և համարը, որի հիման վրա պետք է իր հաշվին անցնի վերապատրաստում.

2) դիմումին կից ներկայացնելով ՀՀ փաստաբանական ակադեմիայի խորհրդի կողմից սահմանված չափով վճարում կատարելու ապացույցը:

17. Լրացուցիչ վերապատրաստման ժամերի վերաբերյալ ՀՀ փաստաբանական ակադեմիան, ոչ ուշ, քան դասընթացի ավարտից եռօրյա ժամկետում տեղեկացնում է ՀՀ փաստաբանների պալատին՝ նշելով դասընթացին մասնակցած փաստաբանի և դասընթացի վերաբերյալ տեղեկություններ:

IV. ՎԵՐԱՊԱՏՐԱՏՈՂ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

18. Վերապատրաստող դասախոսների ընտրությունը կազմակերպում է ՀՀ փաստաբանական ակադեմիայի գիտագործնական դեպարտամենտը՝ դեպարտամենտի կամ դասախոսի նախաձեռնությամբ:

19. Դասախոսն իր նախաձեռնությամբ կարող է ընտրվել որպես վերապատրաստող դասախոս, եթե ներկայացրել է վերապատրաստման դասընթացի առարկայական ծրագիր, ունի դասավանդման փորձ և իր կողմից փաստաբաններին մատուցվող նյութը գիտագործնական դեպարտամենտի գնահատմամբ արդիական է և հետաքրքիր:

20. Գիտագործնական դեպարտամենտը նախապատվություն է տալիս վերապատրաստող դասախոսների այն թեկնածուներին, որոնք գործնական աշխատանքային փորձի հետ զուգահեռ ունեն գիտական կոչում, աստիճան և տպագրված գիտական աշխատանքներ:

21. Վերապատրաստող դասախոսների ընտրության ժամանակ հաշվի են առնվում նաև փաստաբանների շրջանում անցկացված հարցումների արդյունքները:

V. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՎԱՐՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՐԳԸ

22. ՀՀ փաստաբանական ակադեմիայի կողմից կազմակերպված դասընթացների բնականոն ընթացքն ապահովում է դասախոսը, որը՝

1) պարտավոր է դասընթացը սկսել ժամանակին.

2) հայտարարում է ընդմիջման ժամը (որպես կանոն 4 ակադեմիական ժամի դեպքում տրամադրվում է 20 րոպե տևողությամբ ընդմիջում).

3) կարող է դուրս հրավիրել դասընթացը խանգարող փաստաբանին (այս դեպքում, փաստաբանը կհամարվի դասընթացին չմասնակցած).

4) պարտավոր է հարգանքով վերաբերվել դասընթացի մասնակիցներին:

23. Դասընթացի ընդմիջման ժամանակ, որպես կանոն փաստաբաններին տրամադրվում է սուրճից, թեյից և սննդից օգտվելու հնարավորություն:

24. Վերապատրաստման դասընթացին մասնակցող փաստաբանը պարտավոր է՝

1) ժամանակին ներկայանալ դասընթացին.

2) չխոչընդոտել դասընթացի բնականոն ընթացքը՝ աղմկելու, վիճելու, հեռախոս օգտագործելու կամ այլ եղանակով.

3) կատարել դասախոսի՝ դասընթացին վերաբերող առաջադրանքը.

4) գրանցման թերթիկում սահմանված կարգով գրանցվել դասընթացին մասնակցելու համար:

25. Դասախոսը վերապատրաստման դասընթացներին մասնակցող փաստաբանների գիտելիքները և հմտությունները չի գնահատում:

VI. ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

26. Կարգն ուժի մեջ է մտնում 2022 թվականի դեկտեմբերի 21-ից և գործում է անժամկետ:

ՀԱՎԵԼՎԱԾ 2

«Հայաստանի Հանրապետության
փաստաբանական ակադեմիա» հիմնադրամի
ռեկտոր Արա Զոհրաբյանի 20.12.2022թ.
159-Լ հրամանի

**ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾՐԱԳՐԻ
ՁԵՎ**



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ
ԱԿԱԴԵՄԻԱ**

Երևան 202__թ.

Դասընթացի բովանդակությունը

N	ՔՆՆԱՐԿՎՈՂ ՀԱՐՑԵՐԸ ԿԱՄ ԻՐԱՎԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԸ
1.	
2.	
3.	
4.	

1. ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆՅՈՒԹԵՐ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄԵՐ

- Պրոեկտոր
- Համակարգիչ
- այլ

2. ԲԱՇԽՎՈՂ ՆՅՈՒԹԵՐ (ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ)

3. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

4. ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐ ԱԿՏԵՐ

Ծրագիրը կազմող՝ (անուն, ազգանուն, աշխատանքի վայր, պաշտոն, գիտական աշխատանքների առկայության դեպքում դրանց ցանկը, համառոտ կենսագրություն)